ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում**

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ **Վայքի ավագ դպրոց**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կիմա Օհանեսյան**

ՈՒՍՈՒՑԻՉ **Անահիտ Սարգսյան 2-րդ խումբ**

ԴՊՐՈՑ **Արտավանի միջնակարգ դպրոց**

Վայք 2023

Բովանդակություն

1. Ներածություն_____էջ 3
2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում_____ էջ 4
3. Գլխավոր բարոյական արժեքներ_____էջ 9
4. Եզրակացություն_____էջ19
5. Գրականության ցանկ_____էջ 20

Ներածություն

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է:[1]

Ուսուցիչը պետք է խորապես ճանաչի կյանքը, որպեսզի նրա համար պատրաստի մարդկանց: (Լ. Ն. Տոլստոյ)

Ուսուցումը գիտակցության զարգացման կարևոր պայման է: Ուսուցիչը առարկայական նյութերը պետք է կարողանա զուգակցել բարոյական դաստիարակության հետ, որը հնարավորություն է տալիս ամրապնդել մատուցվող գիտելիքների կիրառական, գործնական նշանակությունը: Այս գործընթացը պետք է կազմակերպել գիտամշակութային արդի ձեռքբերումների, մանկավարժական նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի, որ ունի իր ուսերի վրա դրված առաքելություն՝ կրթելու և դաստիարակելու հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ: Այս գործընթացում չափազանց մեծ է ռուսաց լեզվի և գրականության դերը:

Այն ոչ միայն հաղորդակցության միջոց է, այլ նաև հնարավորություն է ընձեռում տարբեր բնագավառներից ձեռք բերել գիտելիքներ և տեղեկատվություն, նպաստում է սովորողների տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը: Գլոբալիզացման գործընթացը անհրաժեշտ և հրատապ է դարձնում համամարդկային և բարոյական արժեքների գնահատումը, համեմատումը ազգային արժեքների, բարոյահոգեբանական նորմերի հետ,որոնցից շատերը կորցրել են իրենց ներգործության ուժը մարդու զարգացած, գիտակցական կեցության վրա:

[1]Ա. Գևորգյան, ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան 2002 էջ 65

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Արժեհամակարգը մարդու հոգևոր, բարոյական, գեղագիտական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ ներառված է անցյալի փորձը, որի յուրացման շնորհիվ աշակերտների մեջ ձևավորվում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, մշակութային արժեքների և գիտական նվաճումների համար հպարտության զգացում; Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում աշակերտների մոտ ձևավորված գիտելիքները վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է տարբեր վերաբերմունք և հարաբերություններ՝

1. Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունն աշխարհի հետ
2. Վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի(ուսումնական հաստատություններ, մանկապատանեկան կառույցներ և այլն) և տեղեկատվական տեխնոլոգիաների(հեռուստատեսություն, համացանց, մամուլ) միջոցով:

   Որպես տեղեկատվության աղբյուրներ՝ կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը և համացանցը ներգործում են աշակերտների անձի վրա: Նրանք հակված են նույնացնել իրենց տարբեր հերոսների հետ՝ յուրացնելով նրանց վարքը, հագուստը, կենցաղը, ոճը և այլն:

   Սովորողների անձի արժեքների ձևավորման գործում հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունի ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և

նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու միջոցի:

Ռուս գրականության մարգարիտները հարստացնում են աշակերտների հոգևոր պաշարները և հոկում նրանց գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի սովորողների արժեհամակարգի լիարժեքության առումով:

Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող եմ հաստատել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով՝ նրանց հաղորդակից դարձնելով օտար մշակույթին և լեզվին:

Հայրենասիրությունը համարվում է նվիրական և մեծագույն արժեք և ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում աշակերտների մեջ այդ արժեքի ձևավորման համար: Օրինակ՝ Լ. Տոլստոյի « Պատերազմ և խաղաղություն » վեպի ուսուցման միջոցով կարելի է դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության և հայրենասիրության բացահայտումներով:

Յուրաքանչյուր ուսուցիչ ունի որևէ հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան օգնում է իր մանկավարժական խնդիրները լուծելու, օրինակ այս դեպքում սովորողների մեջ հայրենասիրություն սերմանելու համար:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը , սերը երեխաների նկատմամբ կարևորագույն պայմաններ են նրանց մեջ բարձր արժեքային համակարգ ձևավորելու գործընթացում:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով :

Ավանդական միջոցները յուրացվում են երեխայի կողմից չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Թ. Չենինին՝(իտալացի նկարիչ), հորդորում է իր աշակերտներին .«….և դուք,որ հոգու նուրբ թելադրանքով ընտրել եք այս բարեգործությունը , մինչև նվիրվելը արվեստին, զարդարեք ձեզ հետևյալ հանդերձներով՝ սիրով, վախով, հնազանդությամբ, համառությամբ: Եվ, որքան հնարավոր է, շուտ հանձնվեք ուսուցչին կրթվելու համար, ինչքան հնարավոր է ուշ հեռացեք նրանից» :

Բարոյականությունը մարդու գործունեության այն ձևն է, երբ անհատն իր անձնական ձգտումները կարողանում է ենթարկել և ղեկավարել՝ ելնելով այլ մարդկանց շահերից:

Գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեն բարոյական զարգացվածության(ԲԶ) չորս աստիճաններ: Սխեմա 1

I

Չեն ճանաչում ճիշտը և սխալը, գործում են միայն այն ուղղությամբ, որտեղ կա շահ, համոզում և գուրգուրանք այլ անձի կողմից:

II

Հասկանում են ճիշտը և սխալը, երբ ստիպում կամ համոզում են հաճախ պատժի, ահի դեպքում միայն կարող են գործի դնել այս զարգացվածության մակարդակում գտնվող անհատին:

III

Փորձում են ճանաչել օրենքները և գործում են միայն դրանց համաձայն՝ փորձելով հաճելի լինել նրանց, ովքեր դնում են այդ օրենքները; Չեն մտածում այդ օրենքների հասարակական ներգործության մասին:

IV

Այս մակարդակում ճշմարտությունը ճանաչում են միայն ելնելով համամարդկային շահերից, այլ ոչ անձնական: Գործընթացն ուղղված է ուրիշների շահերի ճանաչողության և դրանց համապատասխան շարժվելու ուղղությամբ:

Դաստիարակության խնդիրն է ճանաչել այդ մակարդակներին բնորոշ հատկանիշները և օգնել երեխային , անհատին բարձրանալ ցածր աստիճանից դեպի բարձրը:

Բարոյական արժեքները անհատի կյանքում ձևավորվում են ամբողջ կյանքի ընթացքում և փոխանցվում սերնդե սերունդ:

Իմ կարծիքով ուսուցումը, կրթությունը և դաստիարակությունը առանձին բաղադրիչներ չեն: Ուսուցումը համարվում է դաստիարակության միջոց, ուստի չպետք է շեշտը դնել միայն ուսուցման վրա:

Մանկավարժ Վ. Վասիլևը բավական հետաքրքիր միտք է ներկայացնում իր «Արգելքից դուրս» հոդվածում: Հավաստելով այն, որ դեռևս զանգվածային է աշակերտների մտքի և վարքի վրա արգելք դնելու երևույթը դպրոցում՝ գրում է.«Շնորհակալություն պետք է հայտնել նրանց, ովքեր ոգևորում են երեխաներին իրենց անձնազոհ տաղանդով և աշխատանքով,բայց սովորողների ակտիվությունն արթնացնելու համար ավելի շատ գործ են անում նրանք, ովքեր նպաստում են աշակերտների ակտիվության բոցավառմանը, խրախուսում, սատարում և զարգացնում երիտասարդության ստեղծագործական քաղցը, իմացության գործունեության ծարավը»:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա ողջ կյանքում սովորելու, զարգանալու, կատարելագործվելու պատրաստ հայ քաղաքացի կերտելու տեսլականը:

Իմ առարկայի(ռուսաց լեզվի) դասավանդման ժամանակ աշակերտների մեջ արժեքներ ձևավորելու գործում կարևորագույն դեր են խաղում մեջբերումները՝ աֆորիզմները, թևավոր խոսքերը և այլն:

Որպես ուսուցիչ իմ հիմնական խնդիրն է օգնել երեխային գտնել ինքն իրեն, որոշել իր հաջողության ոլորտը և ստեղծել արդյունավետ ինքնազարգացման նախագիծ: Դա անելու համար ես ներգրավում եմ երեխաներին գնահատելու իրենց սեփական ռեսուրսներն ու ձեռքբերումները, որոնց հիման վրա սովորեցնում նրանց հետագա նպատակներ դնել և որոշել դրանց հասնելու ուղիները:

Դպրոցում կարևոր է ոչ միայն յուրացնել ֆունդամենտալ գիտությունների հիմունքները, այլև զարգացնել քննադատական մտածողությունը, հարցեր տալ և կասկածի տակ դնել ճշմարտությունները, պատրաստվել կյանքի նոր, անորոշ և անընդհատ փոփոխվող պայմաններին և, ամենակարևորը, հասկանալ, որ մարդու կյանքը դա ինքնակառուցում (ինքնակազմակերպում) է, ինքդ ես որոշում քո կյանքի արժեքները, ինքդ ես կրում պատասխանատվություն քո առաջընթացի, քո հաջողության, քո կյանքի համար:

Մենք՝ուսուցիչներս, համոզում ենք երեխաներին նրանում, որ անհասանելի նպատակներ չկան, ամեն ինչ իրենց ձեռքերում է: Մենք օգնում ենք աշակերտներին կառուցել իրենց երջանիկ կյանքը: Դաստիարակում ենք երեխաներին ՝ ժամանակակից հասարակության նոր առաջնորդներին, բարձր ակադեմիական և էթիկայի ստանդարտներով, ինտելեկտուալ և մշակութային արժեքների հանդեպ խորը հարգանքի հիմքի վրա:

Ուսուցիչը պետք է կազմակերպի ուսուցումը տարբեր ձևերով(անհատական, խմբակային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն): Սա առավել արդյունավետ կդարձնի աշակերտների արժեքային համակարգի դաստիարակչական խնդիրների լուծումը:

Դեռահասներն ունեն առանձնահատուկ զգացմունքայնություն, ինքնասիրություն(որով ձգտում են ինքնահաստատվել և հասուն երևալ), ուստի մանկավարժի պարտականությունն է ցուցաբերել նրբանկատություն և հարգանք դեռահասի անձի նկատմամբ:

Ուսուցման պրոցեսը դպրոցում բարդ է, բայց հաճելի, քանի որ յուրաքանչյուր աշակերտ առաջ է շարժվում այստեղ իր սեփական ճանապարհով՝ իր կարողություններին և հմտություններին համապատասխան:

Մենք՝ ուսուցիչներս, օգնում ենք յուրաքանչյուրին գտնել իր հաջողության հասնելու ճանապարհը, մշտապես բարձրացնել անձնական ձեռքբերումների շեմը, սովորել հաղթահարել դժվարությունները, բարձրացնել ինքնագնահատականը, ձեռք բերել ինքնավստահություն:

Գլխավոր բարոյական արժեքներ



Արժեքները կյանքի ուղեցույցներ են, որոնք միավորում կամ բաժանում են մարդկանց և որոշում միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններն ու բնույթը: Բարոյական արժեքներն օգնում են տարբերել բարին չարից, որոշել, թե ինչն է լավը, ինչը՝ վատը:

Հոգեբան և սոցիոլոգ Ս.Վ.Կապիկանովը արժեքները բաժանում է երկու խմբի՝

1. սոցիալապես կործանարար
2. սոցիալապես կառուցողական

Հեղինակը առաջին խմբի մեջ ներառում է փողը, համբավը, հարմարավետությունը և մարմնական հաճույքը: Երկրորդին՝ ընտանիք, սեր հավատ, հայրենիք: Արժեքների առաջին խումբը մարդկանց դարձնում է իրեր, կործանում է հարաբերությունները և սովորեցնում է մեզ ընկալել ուրիշներին որպես նպատակին հասնելու միջոց կամ որպես խոչընդոտ:

Երկրորդ խումբը սովորեցնում է փոխօգնություն, աջակցություն և միասնություն: Բայց հարկ է նշել առանձին արժեքների հարաբերականությունը: Ոչ բոլոր մարդիկ են պատրաստ հանուն անձնական հաջողության ուրիշների իրավունքները ոտնահարել:

Իսկ մյուսները նույնիսկ պատրաստ են խաբեության և խարդախության ՝ հանուն իրենց ընտանիքի:

Ցանկացած արժեք պետք է գնահատվի բացառապես անհատի արժեհամակարգում: Ընդհանուր առմամբ արժեքները կարելի է բաժանել՝

1. նյութական
2. բարոյական(հոգևոր)

Արժեքները ձևավորվում են հատուկ կազմակերպված (ընտանիք, դպրոց) և պատահական(փողոց, լրատվամիջոց, ընկերներ) դաստիարակության ընթացքում: Արժեհամակարգը արտացոլում է մարդու անհատականությունը, սակայն կյանքի սկզբում (ծնվելուց հետո առաջին տարիները) մարդը յուրացնում է ուրիշի արժեքային համակարգը (ծնողներ, ուսուցիչներ): Աստիճանաբար ձևավորվում է դրա հետ հնարավոր հարաբերություններից մեկը. ակտիվ(լիարժեք ընդունում և աջակցություն), հակազդեցություն(ներքին և արտաքին հակասություն առաջարկվող համակարգին), կոնֆորմալ(պայմանական արտաքին ընդունում ներքին ժխտմամբ), ամբողջովին անտարբեր, ժխտում(համակարգի քննադատություն, ժխտում, այն փոխելու փորձեր): Հաստատված արժեհամակարգի առաջին լուրջ անկումը տեղի է ունենում դեռահասության տարիքում, հետո գալիս է բարոյական գիտակցության զարգացման գագաթնակետը: Համընդհանուր բարոյական արժեքները ներառում են ՝

1. սեր
2. ազնվություն
3. հարգանք
4. արդարություն
5. պատասխանատվություն
6. աշխատասիրություն
7. և այլն

Սեր- լայն իմաստով սերը բարոյական և գեղագիտական զգացում է, որն արտահայտվում է սեփական օբյեկտի նկատմամբ անձնուրաց և անշահախնդիր ցանկությամբ, անձնատուր լինելու կարիքի և պատրաստակամության մեջ: Սերը

անսովոր տարողունակ հասկացություն է, բազմարժեք և բազմակողմանի: Այն ներառում է՝

1. սեր մարդկանց հանդեպ(մարդասիրություն)
2. սեր հայրենիքի հանդեպ(հայրենասիրություն)
3. սեր բնության, արվեստի, ճանապարհորդության հանդեպ
4. ծնողական սեր և երեխաների սերը ծնողների հանդեպ
5. կնոջ և տղամարդու սերը

Սերը վերաբերմունք է ոչ միայն կոնկրետ մարդու, սիրո առարկայի նկատմամբ, այլև վերաբերմունքի ձև է ամբողջ աշխարհի նկատմամբ: Ցանկացած սեր ունի բարոյական արժեք մարդկային վարքի համատեքստում: **Հայրենասիրությունը,** որը զուգորդվում է պարտքի, պատվի, պատասխանատվության զգացումով, կազմում է բարոյական արժեքների հիմքը; Ուստի յուրաքանչյուր ուսուցչի պարտականությունն է հայրենասիրությունը որպես արժեք սերմանել աշակերտների մեջ:

Սիրել բարոյական իմաստով նշանակում է առաջին հերթին տալ, այլ ոչ թե ստանալ: Բայց իր կյանքը կիսելով՝ մարդը հոգեպես հարստացնում է մեկ այլ մարդու:

Ազնվություն-այն բարոյական որակ է, որը ներառում է ճշմարտացիություն, ազնվություն, հավատարմություն ընդունված պարտավորություններին, համոզմունք սեփական գործի իրավացիության մեջ և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը, անկեղծությունը ուրիշների և սեփական անձի առջև, այլ մարդկանց իրավունքների ճանաչում և հարգանք:[2] Ներդաշնակորեն զարգացած անհատականության ձևավորումը սկսվում է նախադպրոցական տարիքից: Երեխաները սովորում են տարբերել լավն ու վատը, հարգել մեծերին, լինել համեստ, ճշմարտախոս և ազնիվ:

[2](Հասարակագիտության տերմինների բացատրական բառարան. N. E. Yatsenko. 1999)

Այս աշխատանքը շարունակվում է նաև դպրոցական տարիքում: Ազնվության և ճշմարտացիության կրթությունը սերտորեն կապված է դպրոցականների բարոյական դաստիարակության հետ: Ազնվության և ճշմարտացիության դաստիարակությունը սերտորեն կապված են խոստումները կատարելու, սկսած գործն ավարտին հասցնելու,

արարքների համար պատասխանատու լինելու ունակության հետ: Ուսուցչի պարտականությունն է աշակերտների մեջ սերմանել նման բարոյական որակներ:

Երեխայի բարոյական որակների զարգացման աղբյուրներից մեկը **հեքիաթն** է: Այն արդյունավետ գործիք է, որն օգնում է տարրական դասարանների աշակերտների մոտ ազնվության և ճշմարտացիության ձևավորմանը: Ուստի հեքիաթները լայնորեն օգտագործվում են ընթերցանության դասերին որպես օրինակ, երեխաների վարքագծի մոդել:

Դպրոցականների մեջ ազնվության և ճշմարտացիության սերմանման մեկ այլ կարևոր ձև է **բարոյական զրույցը:** Էթիկական զրույցի նպատակն է սովորողներին համակարգված բացատրել վարքի կանոնները և սեփական կարծիքի ձևավորումը: Ընթերցանության դասերին օգտագործվող **ասացվածքները** նույնպես արդյունավետ միջոց են ազնվություն և ճշմարտացիություն սերմանելու համար:

Ուսուցիչը պետք է համակարգված հետևի , թե ինչպես է փոխվում երեխաների վարքագիծը, ինչպես են նրանք վարվում առանց իր մշտական հսկողության, ինչպես են ձեռք բերվում համառ դրական սովորություններ, ինչպես է զարգանում երեխաների գիտակցությունը:

Հետևաբար՝ աշակերտների մոտ ազնվություն և ճշմարտացիություն սերմանելը պետք է իրականացվի բարոյական դաստիարակության տարբեր մեթոդների կիրառմամբ, որպեսզի յուրաքանչյուր աշակերտի համար վարքագծի մշակույթի հիմնական սկզբունքը դառնա հետևյալը.**« Հարգեք մարդկանց և վերաբերվեք այնպես, ինչպես որ ուզում եք ձեզ հետ վարվեն»:**[3]

Ինչու՞ է մարդկանց անհրաժեշտ ազնվությունը



Հարգանք- Հարգանքը և՛ անձնական ինքնության, և՛ միջանձնային հարաբերությունների շատ կարևոր բաղադրիչ է: Հարգված զգալը, կարելի է ասել, մարդու հիմնական իրավունքն է: «Հարգանք»» բառը գալիս է լատիներեն respectus-ից, որը նշանակում է «ուշադրություն», «ակնածանք» և «պաշտպանություն»: Հարգանքը հասկացություն է, որը վերաբերում է մեկ այլ անձի, նրա խոսքերն ու արարքները գնահատելու և հարգելու կարողությանը նույնիսկ եթե մենք չենք կիսում կամ հավանություն չենք տալիս նրա արարքներին: Ուրիշների նկատմամբ հարգանքն այն է, որ կարողանանք հասկանալ և ընդունել, որ չնայած մեր անհատական տարբերություններին, մենք բոլորս հավասար ենք որպես հասարակության անդամներ: Ուստի չափազանց կարևոր է երեխաներին վաղ տարիքից սովորեցնել փոխադարձ հարգանքը: **Իսկ հարգանքը սովորեցնելու լավագույն միջոցը երեխաների համար օրինակ լինելն է:**

Հարգանքը մարդուն ընդունելն է այնպիսին, ինչպիսին որ նա կա՝ չփորձելով փոխել նրան: Ուրիշներին հարգելը շատ կարևոր է, բայց **ինքնահարգանքը** շատ ավելի կարևոր է, քանի որ այն, թե ինչպես ես քեզ վերաբերվում, հիմք է հանդիսանում այն

բանի, թե ինչպես ես վերաբերվում ուրիշներին: Առանց հարգանքի միջանձնային հարաբերությունները կլցվեն կոնֆլիկտներով և դժգոհություններով:

Հասարակության մեջ հարգված լինելը, ուրիշներին և ինքներս մեզ հարգելը ինքնագնահատականի, ինքնարդյունավետության, հոգեկան առողջության և բարեկեցության բանալին է

Ինչպես սովորեցնել աշակերտներին հարգանք



Եթե ուսուցիչը սխալվել է կամ չի կատարել իր խոստումը, չափազանց կոպիտ է եղել երեխայի հանդեպ, շատ կարևոր է ներողություն խնդրել նրանից: Դրանով նրան սովորեցնում է ոչ միայն համեստություն և ներողություն խնդրելու կարողություն, այլև ցուցաբերում է հարգանք նրա անձի նկատմամբ:

Արդարություն-Արդարությունը էական արժեքների ամբողջությունն է, որոնց վրա պետք է հիմնված լինեն հասարակությունն ու պետությունը:

Ձևական իմաստով արդարությունը կոդավորված նորմերի ամբողջություն է, որոնք պետությունը իրավասու համակարգերի միջոցով թելադրում, կիրառում և պատժում է, երբ դրանք չեն հարգվում:

Դասապրոցեսի ընթացքում մենք փորձում ենք երեխաներին սովորեցնել արդար վարվել, պաշտպանել թույլերին և վիրավորվածներին: Բայց հետո իրական կյանքը ցույց է տալիս, որ բարին միշտ չէ, որ հաղթում է չարին և, թեև դու պայքարում ես դրա համար, երբեմն ինքդ մեղավոր կհանդիսանաս: Դրա համար էլ պետք է երեխայի մեջ զգուշություն սերմանել, բացատրել նրան, որ նա դաշտում մենակ ռազմիկ չէ, ուստի ավելի ապահով է գլուխը ցած պահել:

Զգուշանալ անարդարությունից- հենց որ երեխան սկսում է ապրել հասարակության մեջ(խաղահրապարակ, մանկապարտեզ, դպրոց), նա նկատում է, որ եղբայրների հետ հարաբերությունները հեռու են անամպ լինելուց: Այլ երեխաներ կարող են խլել նրա խաղալիքը, հրել իրեն կամ հարվածել: Կամ, օրինակ, տեսնում է, որ ավելի ուժեղ կամ մեծ երեխան վիրավորում է թույլին և փոքրին: Կամ նա տեսնում է, թե ինչպես է ուսուցիչը կամ մանկավարժը անարդար վարվում, վիրավորում իրեն խոսքով կամ գործով: Կամ էլ ականատես է լինում երեխաների կամ մեծահասակների կողմից կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքի:

Երեխաները զգացմունքային են արձագանքում ցանկացած անարդարության, բայց նրանք տարբեր կերպ են արտահայտվում:

«Ընդհանուր իրավացիություն» աշխարհում գոյություն չունի:

հոգեբան Անտոն Նեսվիցկի

Եթե ծնողները սկսում են աջակցել երեխայի մեջ «համընդհանուր արդարության» պատրանքին, ապա նա միշտ մեղավորներին կփնտրի արտաքին միջավայրում, այլ ոչ թե սովորի պատասխանատվություն կրել իր համար: Մենք պետք է բացատրենք նրան, որ նա պետք է պատասխանատու լինի իր ընտրությունների համար, ներառյալ բարիք գործելու ցանկությունը: Թող նա մտածի, թե արդյոք բարություն անելու իր փորձերով չի վնասի իրեն կամ նրան, ում օգնում է:

Երբեմն պատահում է, որ մարդը փորձում է ինչ-որ մեկին լավություն անել(երբ նրան ոչ ոք դա չի խնդրում), հետո վիրավորվում է, որ ոչ ոք չի գնահատել իր ցանկությունը; Տարիքի հետ նա ավելի ու ավելի կվիրավորվի այն փաստից, որ «աշխարհն անարդար է», «ոչ ոքի պետք չէ լավը»: Արդյունքը հիասթափությունն է:

Կարևոր է երեխային բացատրել, որ եթե նա բախվում է անարդարության, ապա արձագանքը պետք է համաչափ լինի: Պետք է սովորեցնել նրան վերականգնել արդարությունը ավելի շուտ բառերով, համոզմունքով, քան՝ ագրեսիայով և բռնությամբ:

Անարդարության ժամանակ անմիջապես կռվի մեջ նետվելու փոխարեն, սովորեցնենք երեխաներին օգնության կանչել մեծահասակներին:

«Առանց իմաստության չկա արդարություն»:

հրեական ասացվածք

Պատասխանատվություն՝ անհատական և հավաքական արժեք

Պատասխանատվությունը սեփական արարքների համար պատասխանատու լինելու և դրանց հետևանքների մասին տեղյակ լինելու պարտականությունն է: Այն սերտորեն կապված է էթիկական և բարոյական արժեքների հետ, որոնք հիմնված են հասարակության իդեալների, ավանդույթների և բարքերի վրա:

Պատասխանատվությունը գենետիկ հատկանիշ չէ, այլ ճիշտ դաստիարակության արդյունք: Խնդիրն այն է, որ երեխաները սովորում են օրինակով և պատասխանատվությամբ մեծանալու համար նրանք պետք է իրենց ծնողների և ուսուցիչների մեջ տեսնեն օրինակներ: Երեխայի մեջ պատասխանատվություն սերմանելու համար պետք է՝

1. **տնային հանձնարարություններ տալ և հետևել դրանց կատարմանը**: Երեխաները հպարտանում են իրենց տնային առաջադրանքների ձեռքբերումներով և սովորում են պատասխանատվություն ստանձնել իրենց հանձնարարված խնդիրների համար:
2. **Թույլ չտալ արդարացումներ գտնել**: Երեխային հասկացնել, որ եթե նա սխալ է թույլ տալիս, պետք է նաև պատասխանատվություն կրի իր արարքների համար: Ընդունելով սխալը, նա գտնում է այն լուծելու ճանապարհը: Մշտական արդարացումները կամ ուրիշներին մեղադրելը թուլացնում են երեխայի դիրքերը

կյանքում՝ նրան անօգնական դարձնելով կյանքի ցանկացած դժբախտության դիմաց:

3. **Խորհուրդ տալ ընտանի կենդանիներ պահել**: Ընտանի կենդանիներ պահելը երեխայի մեջ պատասխանատվություն սերմանելու հիանալի միջոց է:Խնամելով կենդանուն՝ նրանք սովորում են պատասխանատվություն ստանձնել այլ անձի նկատմամբ, իսկ երբ երեխաները մեծանան, պարտականությունների շրջանակը նույնպես կարող է ընդլայնվել:
4. **Օրինակ ցույց տալ**: Ուսուցիչներն ու ծնողները օրինակելի օրինակ են երեխաների համար: Նրանք պիտի ցույց տան, թե ինչ է նշանակում պատասխանատու գործել: Երբեք թույլ չտալ, որ երեխաները լսեն, որ դուք արդարանում եք կամ մեղադրում հանգամանքներին կամ այլ մարդկանց, հակառակ դեպքում նրանք կհետևեն ձեր օրինակին:
5. **Գովաբանություն**- Գովել երեխաներին դասապրոցեսի ընթացքում: Գովասանքը ամենաարդյունավետ ուսուցման գործիքներից է: Չմոռանանք գովել երեխաներին, որպեսզի նրանք ցանկանան նորից զբաղվել նմանատիպ աշխատանքով:

Պատասխանատվության արժեքը կայանում է նրանում, որ դրա շնորհիվ մենք հոգ ենք տանում միմյանց մասին և հասնում ընտանիքի, համայնքի և սոցիալական զարգացմանը: Հասարակության մեջ(հատկապես դպրոցում) ակնկալվում է որ մարդիկ գործեն պատասխանատու կերպով՝ օգտվելով իրենց իրավունքներից և կատարելով իրենց պարտավորությունները որպես քաղաքացի:

Պատասխանատվության օրինակներ

1. Պատասխանատվություն ինքն իր հանդեպ
2. Պատասխանատվություն ընտանիքում
3. Պատասխանատվություն դպրոցում
4. Պատասխանատվություն պետության հանդեպ՝

Պարտականությունն այն գինն է, որ յուրաքանչյուր մարդ պետք է վճարի ազատության համար:

Աշխատասիրությունը սեփական ժամանակը, ուժն ու էներգիան տրամադրելու պատրաստակամությունն է՝ հասարակությանը օգտակար արդյունքներ տալու համար, աշխատանքի մեջ ներգրավվելու և հաճույքով երկար ժամանակ աշխատելու ունակությունը:

Աշխատասիրությունը հանդիսանում է դաստիարակության, ուսուցման և մասնագիտական ուղղորդման արդյունք: Երեխայի մոտ աշխատասիրություն ձևավորելու համար մեծ է ընտանիքի և դպրոցի դերը: Երեխայի բարոյական դաստիարակության մեջ շատ մեծ դեր է խաղում աշխատանքը: Աշխատանքի ընթացքում նրա մեջ ձևավորվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են անհատականությունը, աշխատասիրությունը, կարգապահությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնելու կարողությունը:

Որոշակի հանձնարարված աշխատանքների կատարումը առիթ է հանդիսանում երեխայի մեջ բարյացակամության և արձագանքելու որակների ձևավորմանը:

ԴՐՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԱՄԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՍԻՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ:

Եզրակացություն

Մարդու բարոյական հատկությունները նրա բնավորության անհատական գծերն են, որոնք ձևավորվում են կյանքի ընթացքում: Դրանց ձևավորման վրա ազդում է անհատի միջավայրը(ընտանիք, դպրոց), նրա ձեռք բերած փորձը և սովորած արժեքները: Բարոյական հատկություններն օգնում են մեզ ընտրություն կատարել տարբեր իրավիճակներում:

Հոգեբանները նշում են, որ անհատի բարոյական որակները սկսում են ձևավորվել վաղ մանկությունից: Դրան նպաստում է ընտանիքը,դպրոցը, ինքնակրթությունը:

Մարդու բարոյական հատկությունները կարող են լինել ինչպես դրական(պատասխանատվություն, բարություն,ազնվություն, աշխատասիրություն, հարգանք, կարգապահություն և այլն), այնպես էլ բացասական(ծուլություն, ագրեսիվություն, վախկոտություն, նախանձ, անվճռականություն):

Ուսումնական տարաբնույթ միջոցառումների շրջանակներում խաղերը, բարոյական զրույցները, առակները, էքսկուրսիաները, արտադասարանական միջոցառումները աշակերտների մեջ արժեքներ սերմանելու լավագույն և հայտնի միջոցներից են: Դրանք հաճելի են աշակերտներին և նաև հետաքրքիր:

Արժեքների վրա հիմնված կրթությունը աշակերտների (սովորողների) կյանքի կարևոր մասն է: Այն ստեղծում է միջավայր, որն օգնում է նրանց աճել իրենց ակադեմիական, սոցիալական և փորձագիտական ոլորտներում:

Արժեքներն օգնում են դրական մտածողության ձևավորմանը: Դրանք օգնում են զարգացնել փոխըմբռնումը և փոխհարաբերությունները աշակերտների և ուսուցիչների միջև, ուժեղացնում են իրավիճակներին նայելու վերաբերմունքն ու ձևերը, որոնք օգնում են նրանց հասնել իրենց նպատակներին և հաջողություններին, կյանքում իմաստուն որոշումներ կայացնել, սահմանազատել ճիշտն ու սխալը: Այս արժեքների ձևավորման գործում անգնահատելի մեծ է ուսուցչի դերը, որի պարտականությունն է կրթել համամարդկային արժեքներով սերունդ:

Գրականություն

1. Ա. Գևորգյան, ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան 2002 էջ 65
2. Բաբանսկի Յու.Կ., ՊոբեդանոսցևԳ.Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.
3. Վ. Վասիլև (մանկավարժ)-«Արգելքից դուրս հոդված»:
4. Վ. Կ. Դեմիդենկո, Բարոյական դաստիարակության ակտուալ ասպեկտներ
5. Ջոն Դյուի, Բարոյական սկզբունքները լույսի ներքո-.2001թ.
6. Հասարակագիտության տերմինների բացատրական բառարան. N. E. Yatsenko, 1999)